

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Պատրանք մըն էս դուն ալեւս, ոսկի երազ արցունքոտ,
Հէքեաթ մըն էս հընամեայ, կարծես կայիր չըկայիր...
Հին օրերու ապրումով կախարդանքովը հըլու՝
Որպէս ճըրազ պըլպըլուն կը նշուէս հեռուէն:

Քեզ կը փնտռեմ էս հիմա, սա մայթերէն մենաւոր,
Որուն վըրայ դուն յաճախ ըստուերիդ հետ դուգընթաց՝
Ու նորածիլ քու կեանքով, ու արծարծուն քու կեանքով,
Կը վազէիր դուն դպրոց, կամ դպրոցէն դէպի տուն:

Կ'ըզամ յաճախ ունենալ այդ անցեալէդ պահ մը դեռ,
Քու այն խօսքերդ անընտել, չարութիւններդ բարի,
Մաքուր հոգւովդ անբասիր կեանքը ծըծել չիթ առ չիթ,
Քու այն խօսքերդ անընտել, չարութիւններդ բարի:

ԳԱՐՆԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՆ

Վերջին օրերէդ ժպիտ մը թեւածող,
Թախիծ մը թաքուն բերիդ մէջ վըճիտ
Ծաղիկէ ծաղիկ կայթով յամրաքայլ
Լուռ կը հանգրիճես քըղանցքդ ու կ'անցնիս:

Ցուքը հըրայրքիդ կը խամրի տարտամ,
Ու այս աշխարհէն դեղինը ուսած՝
Ընդվըզում մը խոր կը տանջէ հոգիդ
Բաժանումին այս կեանքէն դեղեցիկ:

Ու ճամբուն վըրայ՝ սիրտը մեր գիւղին,
Նստած կը դիտեմ հեւքը փախուստիդ,
Ու հետքիդ վըրայ, տըմոյն, դեղնաթոյր,
Փառքդ կարճատեւ էս լուռ կ'արտասուեմ:

ՅՈՎԱԿԻՓ ԹԵՐԺԱՆԵԱՆ

Նախկին սան Հալէպի Միսիք. վարժարանի

ԾԱՆՕԹ. — Երիտասարդ գրողը նոր կը մտնէ մեր գրական անդամ-
տանին մէջ. ունի շնորհ եւ զգացում. հարկ է որ հմուտ ձեռ-
քերու տակ՝ աւելի եւս խորանայ հայերէնի եւ բանաստեղծու-
թեան մէջ: ԽՄԲ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Երկար ծրագրումի, խորհրդածութեանց
եւ նախապատրաստական աշխատանքէ մը
ետք, խումբ մը զարգացած եւ նուիրում-
հայեր երեւան եկան խիղախ ու կենսական
առաջադրութեամբ մը, որուն բնոյթն ու
նպատակն է դարկ տալ ու մշակել հայա-
գիտական ուսումները Ամերիկայի մէջ,
զանազան ուսումնասիրութեանց եւ հրա-
տարակութեանց միջոցաւ, ինչպէս նաեւ
հիմնել Հայագիտական Ամպիոն մը Հար-
վըրտ Համալսարանի մէջ:

Այս կազմակերպութիւնը, որ այժմ ծա-
նօթ է Համազգային Հայագիտական Միու-
թիւն անունով, կը կառավարուի տասնը-
հինգ հոգիներէ բաղկացած Վարիչ մար-
մինէ մը, որուն ատենապետն է Մանուկ
Ս. Եանկ: Ամէն ոք կրնայ անդամակցել
այս միութեան շատ փոքր տարեվճարով
մը (ուսանողներու տարեվճարը աւելի
պակաս է): Իր ուղղութեամբ քաղաքական
եւ կուսակցական կապերէ եւ գործունէու-
թենէ հեռու այս միութիւնը կը թուի ան-
հաւատալի, բայց ճշմարիտ իրականացու-
մը ըլլալ երազին բազմաթիւ հայերու, ո-
րոնք անձկագին ակնկալութեամբ վը սպա-
սէին այսպիսի կազմակերպութեան մը
ձեռնարկումին:

Համազգային Հայագիտական Միու-
թիւնը ունեցաւ իր Առաջին Անդամական
Համաժողովը Յունիս 11 - 12ի շաբաթ-
վերջին, Քէյմպրիճի Հօթէլ Քըմէնտըրին
մէջ: Այս համաժողովի նպատակն էր բն-
դունիլ եւ վաւերացնել Միութեան սահ-
մանադրութիւնը եւ մասնակցող 75է ա-
ւելի անդամներուն տեղեկացնել անոր
մինչեւ այդ օրը կատարած աշխատանք-

ները, իրենց բնոյթին ու կարեւորութեան
մէջ, ինչպէս նաեւ յայտնել միութեան
ապագայի (անմիջական եւ հեռաւոր) ծը-
րագիրն ու գործունէութիւնը: Այժմ, այս
հաղիւ հինգ ամսուան կեանք ունեցող
միութիւնը ունի աւելի քան 300 անդամ-
ներ, որոնք կը գտնուին 18 նահանգներու
եւ Միացեալ Նահանգաց մայրաքաղաքին
մէջ:

Համազգային Հայագիտական Միու-
թեան նոր վարիչ մարմինի անդամներն են՝
Մանուկ Ս. Եանկ, ատենապետ. (դասա-
խօս Միջազգային Յարաբերութեանց մա-
սին, ի Նորթիսթըրն):

Միութեան Ա. փոխ-ատենապետն է
Տաքթ. Արա Աւագեան, որ ծանօթ է ամե-
րիկահայ բազմաթիւ համայնքներու որ-
պէս ինքնօրէնութեամբ՝ յոյժ գովելի հա-
յագիտական ուսմանց տիրացած երիտա-
սարդ մը, որ իր ազդին պատիւ կը բերէ,
որպէս Ամերիկա ծնած մը, որ կրցած է
ինքզինք այնքան զարգացնել: Քարտու-
ղարն է Հայկ Տ. Մանուէլեան, (Հայագի-
տական խոր հետաքրքրութիւն ունեցող
կարող երիտասարդ իրաւագէտ մը): Գան-
ձապահն է Ճ. Մարք Մոլիկեան (Սըմըր-
վիլի «Յունիքն Մօթոր Սէյլս, Ինք.» ի նա-
խագահը եւ բնագիտութեան նախկին ու-
սուցիչ էմ Այ Թի-ի մէջ, որ նուիրում եւ
փորձառու անձ մըն է ազգային եկեղեցա-
կան կեանքին մէջ):

Հարվըրտ Համալսարանի նախագահը,
Նէյթըն Բիւզի, ոչ միայն հետաքրքրու-
թիւն այլ նաեւ գործակցութիւն չի խնա-
յեր միութեան յաջողութեան եւ յառա-
ջացման համար: Համալսարանը ունի